# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 24-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին ***որոշում է.***

Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 11-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի վարչական տարածքի Շինուհայր բնակավայրի Մայրուղի փակուղի 21/3 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
2. ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 64-րդ հոդվածի 1.2 կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N1918-Ն որոշման, համաձայն հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2018 ապրիլի 7-ի N79 եզրակացության, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողերից 0.0895 հեկտար այլ հողեր (կադաստրային ծածկագիր՝ 09-073-0027-0024) փոխադրել հատուկ պահպանվող տարածքների հողերի կատեգորիա՝ <<պատմական և մշակութային հողեր>> գործառնական նշանակությամբ:

2.Սույն որոշման 1-ին կետով հատուկ պահպանվող տարածքների հողերի կատեգորիա փոխադրված 0.0895 հեկտար հողամասը նպատակային նշանակության փոփոխության պետական գրանցումից հետո, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով եկեղեցու շինարարության համար, անհատույց սեփականության իրավունքով օտարել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին):

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 26-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով, ավագանին ***որոշում է.***

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավար Մ. Սիմոնյանի հաղորդումը Տաթև համայնքի բյուջեի 2018 թվականի առաջին եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

ԲԱԽՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՄ

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ

Ամսաթիվ 01/01/18թ -31/03/2018թ

Սկզբնական մնացորդ - 13,003,430.10

վարչական-1500,665.80

ֆոնդային-11,502,764.30

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ վաչակ.բյուջե

| Խումբ | Անվանումը | Գումարը |
|---|---|---|
| 07 | գույքահարկ | 2019457 |
| 09 | հողի հարկ | 3048071.5 |
| 26 | նվիրաբերութ. | 2074400 |
| 37 | պաշտոն. ընթ. տրանսֆ. | 32603100 |
| 45 | տեղական տուրք | 78700 |
| 46 | այլ եկամուտներ | 2598494 |
| | ընդամենը՝ | 42422222.5 |

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ֆոնդ.բյուջե

| | | |
|---|---|---|
| 29 | հողի օտարաց. մուտք. | 185214 |

ԾԱԽՍԵՐ

| Հոդված | Անվանումը | Գումարը |
|---|---|---|
| 4111 | աշխատավարձեր | 18217338 |
| 4212 | ԷԼ էներգ. ծառ-ն | 1571726 |
| 4213 | կոմ. ծառ-ն | 37868 |
| 4214 | կապի ծառ-ն | 223025 |
| 4221 | ներքին գործուղումներ | 407000 |
| 4232 | համակարգչային ծառ-ն | 69200 |
| 4233 | աշխատկ.մասնագ.զար.ծ-ն | 71000 |
| 4234 | տեղեկատ.ծառ-ն | 12000 |
| 4241 | մասնագ.ծառ-ն | 395000 |
| 4252 | մեք.սար.ընթ. նորոգ.և պ. | 393400 |
| 4264 | տրանս. նյութեր | 133000 |
| 4269 | հատուկ նպատ.այլ նյութեր | 10000 |
| 4729 | սոց. հատուկ արտոնությու. | 950000 |
| 4823 | պարտադիր վճար | 15000 |
| 4511 | սուբսիդիաներ | 10692511 |
| | ընդամենը՝ | 33198068 |

31.03.2018թ վերջնական մնացորդ -22,412,818.6 այդ թվում՝ վարչական - 9,224,154.5

ֆոնդային-13,188,664.1